

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍՏԵՐՈՒԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԵԱԿԱՆ

0329-0326

ՀԱՅԱՐ

ՁԲ

1925

ՄԱՅԻՍ

ԹԻՒ 5



Ս. ՂԱԶԱՐ

ԲՈՆՈՍԻՐՈՎԱԾ

Ա Գ Ա Պ

(Օտարաց եւ Հայոց մէջ)

(Շաբութակութիւն տես Բազմավէպ 1925, էջ 100)

Ա Գ Ա Պ կը կատարուէր նահւ մեռ
ուելոց տարեղարձին և մանաւանդ մար-
տիրոսաց տօնախմբութեանց օրերը։ Զայս
կը գոտնենք Արքոց վարոց մէջ, ինչպէս
ի Զմիւռնիա 155ին՝ վկայազիրն սրբոյն
Պողիկարպոսի Կ'ըսէ։ « Ճողովցաց մեց
զոսկերս նորա մեծագին քան զականս
պատուականս . եղաց զնա ուր արժանն
էր։ Յորում տեղուո՞ց որչափ ինչ մարթ է
ժողովեալ մեր, ըստ շնորհելոյ Ցեառն
ուրախուրեամբ և ցնծուրեամբ անեմք զօր
յիշատակի վկայութեան նորա, իրուու ի
յիշատակ՝ որոց յառաջազոյն առաքինա-
ցան, և որոց զհետն զան ի կրթութիւն
և ի հրահանգս»։ Քար մը վերջ նոյն սուր-
բին յիշատակին նախընթաց երեկոյին
հսկում և ազատ կը կատարուի։ Զայս
կը յիշատակէ Ս. Պիռն քահանապին վկա-
յագիրը։ « Cum ante diem quam na-

talis Polycarpi adveniret (Pionius)
cum Sabina et Asclepiade devotus
insisteret jejunis, vidi in somniis
sequenti die esse capiendum... Facta
igitur oratione solemnri, cum die
sabbato sanctum panem et aquam
degustassent » . — Ազապի սեղանը
գտնուած են արձանազրութեամբ, ինչպէս
յլրիբէ Թիբրտէոփ մօտ, որ փոխադրուած
է Լուկի Բանգարանը (թ. 3023), ի Մա-
թիֆու մերձ Ալեքրի, ի Թիֆազա և այլուր-
կան եւս ազապի ապակիէ բաժակը Ալ-
եքրիի հին եկեղեցեաց աւերակաց մէջ
գտնուած, ինչպէս ի Մոռասոթ բազմաթիւց
են ասոնցմէ Հռոմայ գետնադամբաններու
մէջ եղածները. ումաց վրայ զրուածներ
ալ կը տեսնուին, ինչպէս Victor vivas
(bibas) in nomine Laure(n)tii ե այլն։
Արեւմասեան ծիսարանը ազապի օրնուու

թեան համար չունի մասնաւոր աղօթքներ։ Բայց յոյժ հաւանական է, որ քրիստոնէութեան առաջին երեք գարերուն մէջ կար մասնաւոր յատուկ կարգ պաշտամանս, ինչ որ կը գտնենք Հիպողիտայ կանոնաց մէջ և մասնաւոր թօմմազի հրատարակած Ալոթից և խնդրուածոց զրբոյին մէջ (Bellulus orationum et precum), որ ին ձեռագիրներէ հաւաքեր է, որոն վերջին մասին մէջ կը հրատարակէ. «Oratio ad agapen pauperum Da Domine., — Item pro his qui agapen faciunt præfatio. Oremus dilectissimi, — Item alia. Sanctum ac venerabilem. և այլն.

Մեզ անձանօթ է ին Հայ — քրիստոնէական — ասորական զարուց մէջ ինչ սովորոյթներ ունէր մեր ազգը, բայց շատ հաւանական է, որ նա հետևող մ'եղած է Ասորուոյն Զորուրդ զարուց նկատմամբ մեզ իջած տւանդութիւն մը Ա. Սահակ Փարթևէն, Լուսաւորիչ իրեն դիմոյ բուրժուուն՝ որ քրիստոնէուն ենք ին Կըսէ. «Պատուզը ընծայից սրբութեան աճանարի Ասոտւոյ նուիրեալը՝ մեզ եղիցին օրհնութիւնը ի ժողովրդց փոխանակ պիղծ զոհիցն այնցոցիք, որովք հազորքաւալը լինէիք դիւաց, այժմ առվրդ պատարագացն երախայրիք և այլովք ընծայեալ պատովք՝ հրեշտակաց սրբոց հաղորդց գտանիցից» (Սոփերը Ա. 130): Դիր աւանդութեանն մանրամասն կը զնէ քահանայից բաժինը. Կ'ըսէ. «Հասցն մեր եղիցին ի պատարաց կաշի, և աջոյ երին, անդամ և ճրագու, և զմակ և սիրու և այլն: Այս պատարաց բարին յիշատակութիւնը և նիփերուն յառաջերութիւնը կը յիշեցնէ Ա. Սահակայ կարգ ցահանայից առ ժողովրդականն՝ ազապի նկատմամբ հետեւեալը, որոնց ցոյց կու տան, որ հինգին երեք զամանակին մէջ բերած Ա. Սահակ յիշատական եկած իրը աւանդ կարգադրութիւնը, բայց հետեւալ արրերութեամբ կամ մեկնութեամբ. «Նա (Մովսէ) սահմանեաց տալ նոցա (Ղեւտացոց) ատանառզա յամենայնէ, (Լուսաւորիչն մեր) հրամայից ժողովրդականն՝ զի փոխանակ մեկնութեամբ: Ենու (Մովսէ) սահմանեաց տալ նուիրաց, որը մատուցանէին յապաջոյն, նուիրեացն միոյն Ասոտւոյ նուէրս յանքանից կենդանաց զենմամբ, օրնութեան աղիւ իտանելով ի Զատկի յարութեանն Տեառն և յիւրացանչիւր տօնս տէրունականն և յերեւելի սրբոց և ի յիշատակ ննջեցելոցն ի Քրիստու՝ իրեկ զոյրու որորմորեան ի կիրակոր ալբատաց յանուն նոցա»: Շատ հետաքրքրական և

յորկորտառթեան՝ յառաջ ցան զպատարողն, ի պատարազին հացն մի՛ իշխնեցէ երթալ և Ա. Ներսէս Շնորհամի, որ իւր մեղրածորան վարդապետութեամբ թագաւորներ և հայրապետներ լուսաւորիք էր մեր ազգին ինչ ինչ բանից և զրուածոց և սովորութեանց նկատմամբ, պայծառ կերպով մեր առջն կը զնէ ազապի շուրջ գարձած խնդիրները Ասորուց զրաց թրդիւմը: Հայը Զատկի օրը և ննջեցելոց հոգոց յիշատակին համար կենդանին կը զոհին, զոր մատապ կ'անուանենք: Ասորիները կ'ամրաստանէին հայերը, որ իրենց այս զոհներվը հրէամիտ աւանդութեանց կը հետեւէն Շնորհամի կը հերբէ այս ամրաստանութեանը և կը յաւելու, «Որ բատ հրէական օրինացն անհիցէ զմատաղ Զատկին կամ զիշշատակ հանգուցելոցն ի Քրիստոս, ոչ միայն խոտելի է, այլ և յար և վիսակար»: Հայը մատապի համար կ'ընտրեն կենդանին «կամ ամժօրաց կամ որպէս պատահէ՝ առելի կամ նուազ, և եթէ առու կամ է՛ անփոյթ եղեալ», մատաղը կը կատարեն «ի նորս Զատկիս առաւոտին»: զայն կը ճաշակեն «բազմեալ և ի տունջեսն, յաղազ մեմելոցն յիշատակի»: Շնորհամին կը յիշէ մեր վերած մէջ բերած Ա. Սահակ յիշատակ լուսաւորչէն եկած իրը աւանդ կարգադրութիւնը, բայց հետեւալ արրերութեամբ կամ մեկնութեամբ. «Նա (Մովսէ) սահմանեաց տալ նուցա (Ղեւտացոց) ատանառզա յամենայնէ, (Լուսաւորիչն մեր) հրամայից ժողովրդականն՝ զի փոխանակ մեկնութեամբ կողցն նուիրաց, որը մատուցանէին յապաջոյն, նուիրեացն միոյն Ասոտւոյ նուէրս յանքանից կենդանաց զենմամբ, օրնութեան աղիւ իտանելով ի Զատկի յարութեանն Տեառն և յիւրացանչիւր տօնս տէրունականն և յերեւելի սրբոց և ի յիշատակ ննջեցելոցն ի Քրիստու՝ իրեկ զոյրու որորմորեան ի կիրակոր ալբատաց յանուն նոցա»:

1. Լըւէրս և յիշ Մէծի Գրիգորի Փահանայտականի կարգագրութեանց նորագործ անզիցիւր համաց

հետաքննական խնդիր մ'է հետևեալըն, զոր Ծորհալին կը յաւելու. «Նա (Լուսաւորիչն) ոչ ի յանձնէ եղ զգապինն զենումն Զատկին, այլ ի Հռոմայեցոյ եկեղեցոյն ընկալաւ և աւանդեաց, որպէս և այժմ առաւել զգուշոթեամբ քան զմիզ առնեն զայր յամենայն եկեղեցին փառանկաց. քանզի խորովեալ զգառն ի Զատկին առուրն զնեն ի խորանն ընդ պատարազաւն, և յան սուրբ Խորհրդոյն համարգելոյ՝ բան ժամենայն բահանային և ատան իւրաքանչիւր մասն, և ի նմին իսկ յեկեղեցւոցն ուրեն զնա յասած քան զայր հասարակաց կերակուրու» :

Բէշըրէլ (Bescherelle) բազիրքը զատկական զարին (agneau pascal) ներքե կը զնէ. «Հայր Զատկին օրը կը կախէին եկեղեցոյ մէջ խորոված քառը և եպիսկոպոսը հայրապետական զգեստովը կը բաժնէր զայն ներկայից, իրենց եպիսկոպոսներէն մին 1570ին վերցոց այս սովորովը : Չորեքտասաններորդ դարուն, կ'ըսէ նոյնը, գրեթէ ամէն եկեղեցիներուն մէջ կ'օրնուէր զատկական զառը պատարազին միջոց։ Հին միաբանութեանց մէջ կ'օրնէին զայն պաշտամունքն վերջը և կը ճաշակէին զայն ճաշու պահուն սեղանատան մէջ, 1780ին այս արարողութիւնն կը կատարուէր տակաւին Փարիզու Ա. Վիկոր արքայարանին մէջ».

Ծնորհալոյն ակնարկութիւնը Հռոմայ եկեղեցին առած սովորութեան արդեօց նշմարցն է, որ մինչեւ ցայսօր կը կատարուէր Ա. Ազնէսի տօնախմբութեան օրը երկու զառանց օրնութիւնը սոյն սըր-

վեցերորդ դարուն վերջերը. «Boves solent in sacrificio Daemonum multos occidere. Debet his etiam de re aliqua solemnitas immutari, ut die Dedicationis, vel natalitie sanctorum martyrum, quorum reliquiae illic ponantur tabernacula sibi circa easdem ecclésias, que ex fanis communaliter sunt, de ramis arborum faciant, et religiosis conviviis celebrant (S. Greg. Fpist. L. XI, L. XXI.).» Ընթերցը այս սոզեր կարգացած պահուն, անշոշ կը դաշտուն բէ նման կարգութիւնն է, որ մըս կուսարքը աւ ըրած է մեր ազգին համար».

բուհույս արտաքոյ պարսպին Հռոմայ իրեն նուիրուած եկեղեցւոյն մէջ, որ և այս տարի կը նկարագրէ L'Osservatore Romano լրագիրը, ինչպէս նաև լ'Անվենիր է՛Italia Պոլոնիոյ օրաթերթը կը զրէ այսպէս Յունուար 20ին, La benedizione degli agnelli Վերնագրոյն ներքեւ, թէ «ըստ սովորութեան Արքունի Ազնէսի կուսարքին օրը, քահանայապետը կ'օրնէ զառներ, որոնց բուրգովը պիտի շինուին սուրբ պալուստերը... Սպիտակ և կենանի զառնուկներ, զարդարուած ծաղիկներով և ժապաւէններով, երկու բարձերու վրայ կեցուցած, նախ կ'օրնութիւն Արքունու Ազնէսի տաճարին մէջ այն սեղանին վրայ՝ որոյ ներքե կը հանգչին սրբուհւոյս ամիւնները...» յստ հանգիստաւոր պատարազին կը կատարուէր օրնութեան մասնաւոր արարողութիւնը : Յետոյ արարութեանը առնելով երկու զառնուկները կը տանի Վատիկանու քահանայապետական պալատը, ուր կ'ընդունին զանոնց թոթայի սուրբ գտարանին գերապայած զահերէցը և այլն... կը ներկայացնեն Քահանայապետին, որ զանոնց օրնէն: Երկու սիրունակ և սպիտակ անաստանները կը յանձնուին Քահանայապետական սրբահնաւագերէցին, որ առաքելական պալատաց կառողի մը զանոնց կը տանի և կը յանձնէ սրբուհւոյն Զեջիլիա վանքին թենեստիկտեան կուսանաց, որպէս զի զանոնց սնուցանեն մինչեւ մերձաւոր Զատկին օրը և յետոյ անոնց բուրգովը շինուին սրբազան պալուստերը» :

Հեղինակը կը յաւելու, որ այս արարողութիւնս կը կատարուէ անյիշշատակ հին ժամանակէ: Ընդհանրական բառազիրն վարուց և պատմութեան ևն. Տէղորրիի և Բաշրէի կ'ըսէ Զատկական գառին համառոտ նշանակութեան մէջ. «Օրնեաւ. գառի մը Զատկին օրը ուտելը տեսեց դարեր ցրիստոնէից մէջ, արարողութիւնը կը կատարուէր եկեղեցոյ մէջ, մասնակից էին քահանայր և հաւատացեալը: Հռոմայ մէջ երբեմն քահանայապետը, երբեմն ծիրանաւորներէն ամենէն երիտասարզը կ'օրնէն»

գառը։ Տակաւին կը տեէ Հայոց մէջ զատ-
կական գտին ճաշակում։

S. Pétridès զատկական գտին համար
կ'ըսէ։ Եղյն ծիսարանը (euchologe) ա-
սոր համար կը պարունակէ մասնաւոր
օրնութիւն մը։ Քահանայն նախ կ'ըսէ
ամէն պաշտամանց համար եղած սկզբնա-
կան աղօթքները, յետոյ երիցս կը կրկնեն
և Քրիստոս յարեաւ», հուսկ աղօթք մը,
որուն մէջ կը յիշատակուին Արքանամու-
զոհած իրոյ, Արեկի ընծայած զառը և
անտառկի դարձնին համար մորթուած պա-
րարակ եղու։ Գոհար՝ բացի այլոց կը յիշէ
և այլ աղօթքները Այժմ յոյն եկեղեցիներու-
մէջ Զատկին օրը կը տանին եկեղեցի՝ օրե-
նութեան համար զոնք առ նուազն զառան
բառորդ մաս մը, պանիր, բայց աւելի
կարմիր ներկուած հակիմ։ Հետաքրքրու-
թեան համար կ'ըսէ, յիշենք որ հոռնչա-
կան երկոտասաներորդ կարգին համեմատ,
քահանայապահետը և ծիրանաւորները կ'ու-
տէին զատկական զառը «Սուրբ պատեր»
երգին ժամանակի, որ յոյն զատկական
պաշտաման ամենագեղեցիկ յաղթական եր-
գերէն մին է։

W. Heyց սոյն բառարանին *Agnoias Dei* (Փառն Աստուծոյ) յօդուածին վեր-
ջը կը գրէ։ Սուրբ շաբաթուն մէջ պա-
տարագի ատեն կայ զառի օրնութիւն մը.
արարողութիւն մէ՛, որ տակաւին մի բանի
եկեղեցիներ կը կատարէն։ Եկեղեցի կը
բերեն զառ մը պատարագի վերաբերու-
թեան պահուն և մասնաւոր կանոնով մը
կ'օրնին զայն։ Հոռվիմական ծիսարանին
մէջ ձեւի արարողական է։ Աղքէն այս
օրնութիւնն կը կատարէն եօթներորդ
զարուն Սպանիոյ վիմագոթ եկեղեցիներու
մէջ։ Զատկական զառին օրնութիւնը կ'ը-
լար Զատկի Կիւրակէն պատարագէն վերջ
աւանդատունը։ Յոյնց կը սիսալին երբ
կ'ամբաստանեն Արևմտեան եկեղեցին, որ
մի և նոյն ժամանակը երբ Ծիսուար Քրիս-
տոսի պատարագը կը մատուցուի սեղանին
վրայ, նոյն ժամանակ կը նուրին զառը
Այս օրհնութեան բազմաւսակ կարգերը
կան մոջարապեան ծիսարանի գրոց մէջ...։

Ենորիալին պայծառ կերպով հակառա-
կորդաց ինչ ինչ առարկութեանց պատաս-
խանելին վերջ կ'ըսէ, թէ ինչպէս պէտք
է կատարել «զմաստաղն Զատկի և զիեառ-
նականին և զննշեցելոցն յիշատակի, զա-
մուլորդն և զյետոյ մտեալն ի տղիսաց՝
ի բաց հանելով՝ զի առանց զայթակղու-
թեան կատարեսցին»։ Զատկի մատաղը
այսպէս պէտք է ընել. Քահանայն Քրիս-
տոփի խաչողվը կը կնքէ աղը, սեղով վրան՝
սահմանաւած սազմուը և աղօթքը և ապա
աղը գտան կը տրուի որ ուտէ, որպէս զի
Աստուծոյ խօսրով և աղօթքով սրուի։
Զայն կ'ընենց, որպէս զի բնութեամբ
սուրբը, որ Աստուծոյ պիտի նուրիուի՝
աւելի սուրբ ըլլայ։ Ենոյ ինչպէս ո և է
անսառուն մը ո և է տեղ մը զայն պէտք
է զննուէ, իորուիլ, և քահանային մասը՝
իրեւ Աստուծոյ նուէր՝ անոր տան և միւս
մասը ուտեն.., այս կերպով կատարուին
նաեւ տէրունական տօներու և Աստուծոյ
սուրբերուն համար եղած մատաղը, Տերունեան մատաղը, որ Աստուծոյ խօս-
տացուած մատաղն է, այսպիսի է ասոր
պաշտաման կարգը։ Քահանայց կը կար-
դան աղին վրայ գրաւած օրհնութիւնը
և զայն անանոյն կու տան. յետոյ կը
զենուն կենդանին և քահանային՝ անկէ
եղած բաժինը կու տան և մնացածը կը
բաշխեն աղբաներու և կարօտալներու։
Կ'արգելու ինչ որ տգէտ քահանայց կար-
գարերին են, այսինցն է ծածկել անսառունը
կարմիր զգանաներով և եղջրիները նա-
րոտով կապէլ, վասն զի այս բաներու կին
օրէնցին համեմատ են, աւելորդ և անօգուտ,
և անմանաւանդ պատճառ վայթակղութեան։
Ննշեցելոց մատաղը, կ'ըսէ, պէտք է այս-
պէս ըլլայ. Քահանայց կը ժողովին մէկ-
տեղ եկեղեցոյ գուոք, իրենց կետ պա-
տարագին տէրն ալ, կը զնեն աղը սուրբ
խաչին առջև, և կ'երգեն գրուած ասպմուն
և պաշտամունը, կ'ընթեռնուն կարդաց-
մունց և աղօթքները երկիւով և ջերմե-
ռանց սուրբ. կը յիշեն մեռելին անունը
և կը խնդրեն անոր համար Աստուծէ
մեղքերուն բողութիւն. կու տան օրհնեալ

աղը և կը զենուն անասունները, կու տան քահանայից համար սահմանաւած մասերը, և մտացածներպվ նախ անթիները և կարուսեանները կը կերակրեն, և թէ որ աւելնալու բան ալ մնայ՝ միրելիները և բարեկամները. և բացի առաջին օրէն՝ միւս առաջիկայ օրերուն համար աննոցմէ բան մը պէտք չէ ամբարել իրեն՝ տան կերակորի համար, վասն զի Աստուծոյ նոլիրուած է նաև ոչ ոք ագիտարար ըսէն, թէ առանց մատաղի՝ ննջեցելոց համար պատարագ չի մատուցուիր, վասն զի այս բան ըսելը մեծ ամբարշտութիւն է. Արդիշնուու անասուններու զննունները՝ առաւելութիւն մը չունի կենդանիաց կամ մեռելոց օժանդակութեան համար, բայց միայն իրեւ ողորմութեան տուրը մը. վասն զի պատուիրան մը կայ որ Աստուծած տուերէ և ամէն բանէն նուէր հանել իրեն՝ աղքատներու ձեռորվ, ինչպէս պտուէ, սերմանիցէ, այսպէս նաև անասուն կենդանիէ. իսկ Քիրիստոսի պատարազը, զոր կը կատարեն ճշմարիս հաւատըզվ սուրբ քահանայից՝ ննջեցեաններու աննուամբը, մտքէ և խօսք զեր է մեծութեամբ. Շնորհալի հայրապետոս կը կրկնէ Եկեղեցինէ իր այս թղթոյն մէջ, որ մատաղը՝ ողորմութեան տուրը է և ոչ այլ ինչ, և արուած ողորմութիւնն թէ մեռելոց և թէ կենդանիաց մեծապէս օգուտ է:

Այժմ թէւ մեր ազգը մատաններու կարգն և պաշտամունքը հնոց չափ չի կատարեր և կամ այն յաճախութիւնը չունի, բայց քառորդ զար առաջ ինչ ինչ վայրեր, մանաւանդ ուխտատեղեաց մէջ մեծ հանդիսաւորութեամբ կը կատարուէր: Երբ ուխտաւորք կը դառնային Երուսաղէմէն, Էջմիածնէ, Մշտ Ա. կարապետէ, կարնոյ կարմիր վանքէն և Լուսաւորչէն, ինչպէս նաև Արմաշէն՝ հետերնին կը բերէին պատարազի մասէն և զայն յարգանոց կը պահէին տան մէջ՝ իրեւ նուրիսկան սրբարձնութեամբը և Այդ թուականնէն կէս զար առաջ զե՞ռ աւելի վառ էր հայ ժողովրդեան բարի հաւատութեամբը և էջերովն ի միասին:

ճշմարիտ ջերմեռանդութիւնը. երջանիկ էր ամնային ընտանիք, որովհետեւ նահապետական ազգի մը կենական շնորհները կը փայլէր ամէն ընտանեաց մէջ, ուր կը տիրէր Աստուծոյ օրնութիւնը և միարանական սէր, որուն հիմն էր՝ երկիր ծեառն: Բայց, աւագ, դարում չար յեղաշշական ոգին մուտ գործելով՝ ամենայն սրբազան ինչ տակաւ տակաւ հեթանոսական ասնձարձակ կրաց ենթակայ եղաւ: Իեն ևս կը հնչէ ականջար բարի ըրիստոնէից տրտունջը, որ կը դառնային Արմաշու սփասավայրէն, հանդէպ այնպիտիններուն՝ որ ոչ իրեւ ուխտավայր, այլ կը. Պոլսի և այլ ծովեզերեայ տեղերէ հոն դիմողներէ՝ զարձուած էր զրօսավայր և կամ չար բան զայս: Կը յիշեցնէր Ակրիւ կէի փայթակութիւնքը, որ Ա. կիպրիանոսի տօնախմբութեան օրով՝ չարամէս ասմիկը կ'ուսէր, կ'արքենար, որոց գէմ կը կանգնէր մեծ հայրապետ մը՝ Ա. Օգոստինոս, ինչպէս և ի կ. Պոլսի Սուրբն Ասկէփրան, որը կը ձադէին չարութիւնքը և ապերատանութիւնքը. իսկ յափանական բաշտացին՝ հովիւր՝ այն սովորոյթքը որ ըստ ինքեան բարի էին (բայց զեղծմունք) այլևս օգտակար չէին ըներ հաւատացելոց՝ զանոնց կը վերցնէին և լաւազգներ և դարուն պատշաճաւորքը կը կարգադրէին: Կրնանց զուրցել, որ Արեւմտեան աշխարհն մէջ վեցերորդ դարէն վերջը չենք յիշեր պապի հանդիսաւորապէս ինչոյնքը եկեղեցեաց և կամ ասոր համար կարգադրուած սրահներու մէջ: Նիւթոյս վրայ աւելի ծանօթութիւն ունենալու փափառողը կրնան ընթեռնուէ Պաթիփողի¹ և մանաւանդ Լքըլէրը² հեղինակութիւնքը, որ և կը նշանակէ իւր հարիւրէ աւելի աղբիւրքը զվիսակարգութեամբը և էջերովն ի միասին:

Ո. Կ.

1. P. Batiffol. Dictionnaire de Théologie Catholique, Tome premier. Agapes 551-556.

2. H. Le Clercq. Dictionnaire d'Archéologie Chrétienne et de Liturgie. Agape 775-848.